Հաջողություն Աֆղանստանում, Ունակությունների բարելավում, Համագործակցության ամրապնդում

Ռիգայի Գագաթաժողովը, որը տեղի ունեցավ 2006 թ. նոյեմբերի 28-ին և 29-ին, նշանակալի իրադարձություն էր ՆԱՏՕ-ի համար: Սառը պատերազմի ավարտից հետո՝ դա ՆԱՏՕ-ի անդամ 26 պետությունների և կառավարությունների ղեկավարների ութերորդ հանդիպումն էր և առաջինը, որը գումարվում էր ՆԱՏՕ-ի նորահայտ անդամների վերջին խմբի երկրներից մեկի մայրաքաղաքում: Ինչպես նշեց ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յապ դը Հուպ Սխեֆերը, «ոչինչ ավելի հստակ չէր ցուցադրի, թե որքան է Եվրոպան փոխվել դեպի լավը, քան այն փաստը, որ Գագաթաժողովը տեղի է ունենում այստեղ՝ այն Լատվիայում, որը ժողովրդավարական է, այն Լատվիայում, որն ազատ է»:

Լատվիայի մայրաքաղաքում Դաշինքի անդամ երկրների ղեկավարներն ամրապնդեցին իրենց հանձնառությունն Աֆղանստանում ՆԱՏՕ-ի առաքելությանը և միջազգային հանրությանն ավելի լայն մասնակցության կոչ արեցին: Նրանք ՆԱՏՕ-ի ռազմական կարողությունների ամրապնդման միջոցառումներ ձեռնարկեցին և գործընկերների հետ հարաբերությունները խորացնելու և ընդարձակելու նախաձեռնություններ ամրագրեցին: Այսպիսով, Դաշինքն ապացուցեց, որ պատրաստ է դիմակայել 21-րդ դարում անվտանգության նոր սպառնալիքներին:

ՆԱՏՕ-ի ղեկավարները Ռիգայում հաստատեցին «Համապարփակ քաղաքական ուղեցույցը»՝ հիմնարար մի քաղաքական փաստաթուղթ, որում շարադրված են Դաշինքի հնարավորություններին, գործողությունների ծրագրմանը և հետախուզությանն առնչվող բոլոր խնդիրների առաջնահերթությունները՝ գալիք տասը և ավելի տարիների կտրվածքով: Ուղեցույցը, որը հիմնված է Դաշինքի 1999 թ. Ռազմավարական հայեցակարգի վրա, արձանագրում է, որ մոտ ապագայում Դաշինքին ուղղված հիմնական սպառնալիքներ են հանդիսանալու միջազգային ահաբեկչությունը և զանգվածային ոչնչացման զենքերի ու դրանց կրման միջոցների տարածումը, ինչպես նաև փլուզված կամ փլուզվող պետությունների պատճառով առաջացած անկայունությունը, տարածաշրջանային ճգնաժամերը, նոր տեխնոլոգիաների չարաշահումը և կենսապահովման պաշարների հոսքի խաթարումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ուղեցույցը սահմանում է, թե ինչ տիպի գործողություններ պետք է Դաշինքն ի վիճակի լինի իրականացնել և ինչ տիպի կարողությունների կարիք կունենա: ՆԱՏՕ-ի ուժերը պետք է շարունակեն մնալ հավասարակշռված, ճկուն ու արագաշարժ՝ ի զորու իրականացնելու ցանկացած բարդության առաքելություն: Ուղեցույցը շեշտում է նաև, որ հավանաբար ՆԱՏՕ-ին անհրաժեշտ է լինելու իրականացնել համեմատաբար ավելի մեծ թվով և ավելի բազմատեսակ փոքրածավալ գործողություններ:

Ռիգայի Գագաթաժողովի օրերին Դաշինքը երեք աշխարհամասերում մասնակցում էր վեց առաքելության ու գործողության: Դրանք են՝ Միջազգային անվտանգությանն աջակցող ուժերը՝ Աֆղանստանում, Կոսովոյի ուժերը (KFOR), «Ակտիվ ջանք» գործողությունը (Operation Active Endeavour)՝ Միջերկրական ծովում, ՆԱՏՕ-ի շտաբը՝ Սարաևոյում, ՆԱՏՕ-ի ուսուցողական առաքելությունը՝ Իրաքում և աջակցությունը Աֆրիկյան Միության առաքելությանը՝ Սուդանում: Հանդիպման ընթացքում, Դաշինքի երկրների ղեկավարները հարգանքի տուրք մատուցեցին այն զինվորներին, որոնք ծառայել են այս առաքելություններում, ինչպես նաև ներկայումս ծառայող ավելի քան 50 000 տղամարդկանց ու կանանց: Նրանք լռության րոպեով հարգեցին վիրավորներին ու զոհվածների հիշատակը:

> Շարունակական հանձնառություն Աֆղանստանում ու Կոսովոյում

Ռիգայի Գագաթաժողովը սկսվեց նոյեմբերի 28-ին, աշխատանքային ընթրիքով, որը հիմնականում նվիրված էր ՆԱՏՕ-ի առաջնահերթ խնդրին՝ Աֆղանստանում խաղաղության ու կայունության հաստատմանը: Դաշինքի երկրների ղեկավարները վերահավաստեցին իրենց համերաշխությունն ու տևական հանձնառությունն այս նպատակի իրականացման հարցում, համածայնելով վերացնել մասնավոր բնույթի տարակարծությունները առ այն, թե ուժերն ինչպես, երբ և որտեղ կարող են օգտագործվել ՆԱՏՕ-ի կողմից առաջնորդվող՝ Միջազգային անվտանգությանն օժանդակող ուժերի հետագա ամրապնդման նպատակով: Նրանք կրկին հավաստիացրեցին, որ, անկախ դեռևս առկա գործողություններին ներգրավման ազգային սահմանափակումներից, արտակարգ իրավիճակի դեպքում յուրաքանչյուր Դաշնակից օգնության կիսասնի դրա կարիքն ունեցող ուժերին: Մի շարք երկրներ հանձն առան տրամադրել լրացուցիչ միջոցներ, այդ թվում՝ մարտական ինքնաթիռներ, ուղղաթիռներ, հետևակ վաշտեր և զինվորական հրահանգիչների խմբեր՝ Աֆղանստանի ազգային բանակը մարզելու համար:

Աֆղանստանի տևական կայունության համար՝ վերակառուցման ու զարգացման կարևորությունն ընդունելով, ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները միջազգային հանրությանը կոչ արեցին քաղաքական, ռազմական և տնտեսական ավելի լայն մասնակցություն և բազմակողմանի օժանդակություն տրամադրել: «Աֆղանստանում անհնար է անվտանգություն՝ առանց զարգացման, և զարգացում՝ առանց անվտանգության»,- հայտարարեցին նրանք Գագաթաժողովի հռչակագրում: ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները ողջունեցին այնպիսի Շփման խմբի ստեղծման առաջարկները, որը կհամախմբեր շահագրգիռ հիմնական կողմերին՝ կարևոր ռազմավարական խնդիրները քննարկելու և դրանց վերաբերյալ համածայնության գալու նպատակով: Գլխավոր քարտուղարին հանձնարարվեց ընթացք տալ առաջարկին:

Դաշինքի երկրների ղեկավարները քննարկեցին նաև ՆԱՏՕ-ի կողմից առաջնորդվող՝ Կոսովոյի ուժերի խնդիրը (KFOR), հաստատելով Դաշինքի՝ Կոսովոյի կարգավիճակի կայացմանն ուղղված միջոցառումների

մասը կազմող անվտանգության դրույթներն իրագործելու իրենց պատրաստակամությունը: ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները հստակեցրեցին, որ, ինչպես Աֆղանստանում, այնպես էլ Կոսովոյում, հաջողությունը կախված է ջանքերի համախմբվածությունից: Հետևաբար, անվտանգ միջավայր ապահովելու ուղղությամբ ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող գործողությունները կշարունակեն համակարգվել ՄԱԿ-ի, Եվրոպական Միության ու Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության՝ կառավարման համակարգի ստեղծմանն ու բարեփոխումներին աջակցելուն ուղղված գործողությունների հետ:

> ՆԱՏՕ-ի Արձագանքման ուժերը՝ լիովին մարտունակ

Դաշնակից երկրների ղեկավարները Ռիգայում հայտարարեցին, որ ՆԱՏՕ-ի Արձագանքման ուժերը (NRF) հասել են լիակատար մարտունակության մակարդակի: Տեխնոլոգիապես առաջավոր այս ուժերը բաղկացած են ցամաքային, օդային, ծովային և հատուկ նշանակության ուժերից, որոնք, անհրաժեշտության դեպքում, Դաշինքը կարող է արագորեն տեղակայել: Դրանք ի վիճակի են աշխարհի ցանկացած կետում ցանկացած տեսակի գործողություն իրականացնել, այդ թվում՝ տարահանումներ, աղետի հետևանքների վերացում, հակաահաբեկչական միջոցառումներ, ինչպես նաև ճանապարհ բաց անել ժամանող ավելի մեծաքանակ ուժերի համար: Այդ ուժերում կարող է ընդգրկվել մինչև 25 000 զինվորական: Ծանուցումից հինգ օր անց նրանք կարող են սկսել առաքելությունը և ինքնուրույն գործողություններ իրականացնել 30 օր շարունակ, իսկ վերամատակարարման դեպքում՝ ավելի երկար:

Գլխավոր քարտուղարը NRF-ի լիակատար մարտունակության հասնելը որակեց «խոշոր նվաճում, քանզի այն Եվրատլանտյան հանրությանն անհախադեպ հնարավորություններ է տալիս»: ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները Ռիգայում համաձայնության եկան NRF-ի շտապ տեղակայումների համատեղ ֆինանսավորման վերաբերյալ. համաձայնություն, որը երկրներին շահագրգռելու է մասնակցել ուժերի հետագա կազմափոխումներին:

Համաձայնագիրը հատուկ անդրադառնում է օդային փոխադրմանը, «ամենածախսատար մասին»՝ ըստ Գլխավոր քարտուղարի: Գագաթաժողովի ընթացքում, Ռիգայի օդանավակայանում ցուցադրված էր «Բոինգ» C-17 օդանավ: ՆԱՏՕ-ի անդամ տասնչորս երկիր և Շվեդիան մտադիր են ՆԱՏՕ-ի Ռազմավարական օդային փոխադրումների շրջանակներում համատեղ ձեռք բերել և շահագործել երեք կամ չորս C-17, ինչը կհամալրի արդեն իսկ ռուսական և ուկրաինական «Անտոնով» An-124 օդանավերով գործող «Ռազմավարական օդային փոխադրումների միջանկյալ լուծում» ձեռնարկումը: Մեկ այլ նախաձեռնությամբ, նախատեսվում է համադրել աջակցությունն ապագայի A400M օդային փոխադրողի ստեղծմանը:

ՆԱՏՕ-ի Արձագանքման ուժերը և Դաշինքի կողմից տեղակայված այլ ուժեր ապագայում պաշտպանված կլինեն ՆԱՏՕ-ի Ռազմական թատերաբեմի ակտիվ բալիստիկ հակահրթիռային պաշտպանության համակարգով: Ռիգայում, ՆԱՏՕ-ի և այդ ծրագիրն իրագործող արդյունաբերական խմբի առաջատար «Սայընս Էփլիքեյշնզ Ինթերնեյշնլ Քորփորեյշնի» (Science Applications International Corporation – SAIC) միջև ստորագրվեց այդ համակարգի մշակման և ներդրման 75 միլիոն եվրո արժողությամբ պայմանագիր: Դա նախատեսում է, որ ՆԱՏՕ-ի Ռազմական թատերաբեմի հակահրթիռային պաշտպանությունն իր սկզբնական հնարավորություններով կարող է գործել 2010 թ.:

Ռիգայում, ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները գործարկեցին հատուկ գործողությունների իրականացման ուժերի փոխակերպման նախաձեռնություն, կոչված համատեղ վարժանքների ընդլայնմանը և դոկտրինի մշակմանը, հանդերձանքի կատարելագործմանն ու փոխգործակցության բարելավմանը: Դաշնակիցները նաև հետագա աշխատանքներ նախանշեցին արդի գործողությունների համար կենսական նշանակություն ունեցող մի շարք այլ ոլորտներում, ներառյալ օդային դիտարկումները, մատակարարումները և հետախուզական տվյալների փոխանակումը: Սրանք և ՆԱՏՕ-ի փոխակերպման ընթացքի գործնական պատկերը ցույց տվող այլ քայլերի մի լայն ցանկ Գագաթաժողովի օրերին ի ցույց էր դրված Փոխակերպման ցուցահանդեսում:

Փոխակերպումը ծախսատար է: Ռիգայի Գագաթաժողովի հռչակագիրն ամրագրեց Դաշնակիցների հանձնառությունը՝ անհատապես ու խմբովին շարունակել ապահովել ՆԱՏՕ-ին առաջադրված խնդիրների լուծման համար պահանջվող միջոցները: Այդ պատճառով, նրանք կոչ արեցին այն անդամ պետություններին, որոնց պաշտպանական ծախսերը նվազում են, մեծացնել փաստացի ծախսերը:

> Բարի գալուստ՝ նոր Գործընկերներին

Ռիգայում, ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները համաձայնեցին «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին և Եվրոատլանտյան գործընկերության խորհրդին միանալու հրավիրել ևս երեք երկիր՝ Բոսնիային և Հերցեգովինային, Մոնտենեգրոյին և Սերբիային: Գլխավոր քարտուղարը նշեց, որ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին անդամակցելը կօգնի այդ երկրներին դառնալ «եվրոատլանտյան ընտանիքի ավելի լիարժեք անդամ», միաժամանակ շեշտելով նախկին Հարավսլավիայի գործերով Միջազգային քրեական դատարանին լիովին օժանդակելու չնվազող հրատապությունը:

ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները տվեցին այն, ինչը Գլխավոր քարտուղարն անվանեց Անդամությանը պատրաստվելու գործողությունների ծրագրում ընդգրկված երկրներին՝ Ալբանիային, Խորվաթիային և Մակեդոնիայի* նախկին հարավսլավական հանրապետությանն ուղղված «հստակ ազդանշան» այն մասին, որ «Դաշինքը մտադիր է հետագա հրավերներ հղել այն երկրներին, որոնք համապատասխանում են ՆԱՏՕ-ի կատարողական չափորոշիչներին և ի վիճակի են նպաստել Եվրոատլանտյան անվտանգությանն ու կայունությանը» ՆԱՏՕ-ի հաջորդ՝ 2008 թ. Գագաթաժողովում:

Դաշնակից երկրների ղեկավարները Ռիգայում ընթացող աշխատանքներն ուղղորդեցին դեպի ՆԱՏՕ-ի գործընկերային կառույցների քաղաքական ու գործնական ներուժի, ինչպես նաև Շփվող երկրների, օրինակ՝ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի ու Ճապոնիայի հետ Դաշինքի հարաբերությունների լիակատար զարգացումը: Սա կներառի միջոցառումներ,

որոնց շնորհիվ խորհրդակցությունները կդառնան ավելի առարկայական, հանդիպումների ձևաչափերն՝ ավելի ճկուն, ինչպես նաև թույլ կտա կայացած գործընկերության միջոցներն ավելի մատչելի դարձնել և՛ նորահայտ գործընկերներին, ինչպիսիք են Միջերկրածովյան երկխոսության գործընթացում և Ստամբուլի Համագործակցության նախաձեռնությունում ներգրավվածները, և՛ Շփվող երկրներին:

Ռիգայում, Դաշինքի անդամ երկրների ղեկավարները սկիզբ դրեցին ՆԱՏՕ-ի Ուսուցողական նախաձեռնությանը, որի նպատակն է օժանդակել Միջերկրածովյան երկխոսության և Ստամբուլի Համագործակցության նախաձեռնության գործընկերների զինված ուժերի ուսուցմանը: Դա կիրագործվի փուլ առ փուլ՝ նախ ընդլայնելով նրանց մասնակցությունը ՆԱՏՕ-ի արդեն իսկ գործող վարժական ու կրթական ծրագրերին ու գործընկերային միջոցառումներին և Հռոմում ՆԱՏՕ-ի Պաշտպանության քոլեջում Մերձավոր Արևելքի բաժանմունք հիմնելով: Երկրորդ փուլում ՆԱՏՕ-ն կարող է աջակցել Մերձավոր Արևելքում առանձին ուսումնական հաստատության ստեղծմանը:

Եվ վերջապես, Ռիգայի Գագաթաժողովը Դաշինքի անդամ երկրների ղեկավարներին հնարավորություն տվեց ողջունելու Վրաստանի հետ Խորացված երկխոսության սկիզբը՝ վերջինիս անդամակցելու ցանկությանն առնչվող խնդիրների վերաբերյալ: Նրանք նաև վերահավաստեցին ՆԱՏՕ-Ուկրաինա Հատուկ գործընկերության կարևորությունն ու ողջունեցին դրա շրջանակներում ընթացող Խորացված երկխոսության հարցում տեղի ունեցած առաջընթացը: Դաշնակիցները շեշտեցին ՆԱՏՕ-Ռուսաստան գործընկերությունը շարունակելու և ՆԱՏՕ-Ռուսաստան Խորհրդի ողջ ներուժն օգտագործելու իրենց վճռականությունը: Նրանք նաև կոչ արեցին ՆԱՏՕ-ի և Եվրոպական Միության միջև ավելի աշխույժ ու խորը համագործակցություն հաստատել: Գլխավոր քարտուղարը հիշատակեց Աֆղանստանն ու Կոսովոն՝ որպես «երկու ասպարեզ, որտեղ դա, անշուշտ, խիստ անհրաժեշտ է»:

Լատվիայում, ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները վերահավաստեցին Հյուսիսային Ամերիկայի ու Եվրոպայի միջև անբակտելի կապի գոյությունն ու ընդգծեցին Դաշինքի փոխակերպման գործին իրենց հանձնառությունը: Գագաթաժողովի հուշակագիրն ամփոփում է՝ «Որոշումները, որոնք

կայացրել ենք համատեղ՝ մեր ղեկավարած աշխատանքներին զուգահեռ, ցույց են տալիս, որ Դաշինքը հարմարվում է 21-րդ դարի անվտանգության միջավայրին՝ իր գործողությունների, փոխակերպված պաշտպանական հնարավորությունների, Եվրոատլանտյան գոտում և դրանից դուրս գտնվող երկրներում ավելի լայն ներգրավման, ինչպես նաև անընդհատ ներքին բարեփոխումների շնորհիվ: Այդ ջանքերը կամրապնդեն Աֆղանստանում մեր առաքելությունն ու Դաշինքի կարողությունը՝ ապագա մարտահրավերներին դիմակայելու համար: Հաջորդ անգամ, մենք կհանդիպենք 2008-ի գարնանը, որպեսզի գնահատենք ձեռքբերումներն ու հետագա ուղղություններ նախանշենք ՆԱՏՕ-ի ընթացող փոխակերպման, այդ թվում՝ նաև մեր ընդլայնման գործընթացի համար»:

* Թուրքիան Մակեդոնիայի հանրապետությունը ճանաչում է վերջինիս սահմանադրական անվանմամբ:

NATO Public Diplomacy Division
1110 Brussels – Belgium
Website: www.nato.int
Email: natodoc@hq.nato.int

Division Diplomatie publique de l'OTAN
1110 Bruxelles – Belgique
Site web : www.otan.nato.int
Courriel : otandoc@hq.nato.int



© NATO/OTAN 2006

NATORIGARM1206